ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2010 թվականի _____ _____ N _____ -Ա

«ՍԱՖՈՐԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ, ԲԱՑԹՈՂՈՒՄ ԵՎ ԻՐԱՑՈՒՄ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 26-րդ հոդվածների, 43-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 110-Ն որոշմանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

«Սաֆորա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (իրավաբանական անձի գտնվելու վայրը (հասց ք. Մարտունի, Գետափնյա 1 և գործունեության իրականացման վայրը (հասցե)՝ ք. Մարտունի, Գետափնյա 1, Մարտունու հիվանդանոցի «Ե») տալ հոգեմետ նյութերի բաշխման, բացթողման և իրացման լիցենզիա՝ երեք տարի գործողության ժամկետով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Սաֆորա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հոգեմետ նյութերի բաշխման, բացթողման և իրացման գործունեության իրականացման լիցենզիա տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը կառավարության քննարկմանն է ներկայացվում վերոհիշյալ կազմակերպության հայտի հիման վրա։

Կազմակերպությունը հայտին կից ներկայացրել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, 17-րդ հոդվածի 2-րդ և 43-րդ հոդվածի 2-րդ մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հունվարի 10-ի «Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի բաշխում, բացթողում և իրացում գործունեության իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» N 110- Ն որոշմամբ նախատեսված հետևյալ փաստաթղթերը՝

1. լիցենզիա ստանալու մասին հայտը
2. կանոնադրության և պետական գրանցման վկայականի պատճենները
3. լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը /50000 հազ. դրամ/
4. ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից տրված անվտանգության պայմանների պահպանման մասին եզրակացությունը
5. անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճեն
6. հոգեմետ դեղեր բաշխող, բաց թողնող և իրացնող համապատասխան որակավորում ունեցող դեղագործի որակավորումը հաստատող փաստաթղթերը՝ ներառյալ դիպլոմը և կնքված աշխատանքային պայմանագրի պատճենները

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը և ՀՀ արդարադատության նախարարությունը ներկայացրել են դրական կարծիքներ։

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, 17-րդ հոդվածի 2-րդ և 43-րդ հոդվածի 2-րդ մասը, «Սաֆորա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հոգեմետ նյութերի բաշխման, բացթողման և իրացման գործունեության իրականացման լիցենզիա ստանալու համար հայտը հնարավոր է բավարարել՝ երեք տարի գործողության ժամկետով։

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ